ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «17» նոյեմբերի, 2015 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 35-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը և շնորհման կարգը հաստատելու մասին» N 27-Ա/Ք հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 6-րդ և 8-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի (այսուհետև՝ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ) 80-ամյակի կապակցությամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ԳԱԱ ԵԳԻ ներքոհիշյալ աշխատակիցներին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պատվոգրեր՝ գիտության և տեխնիկայի բնագավառում ունեցած ձեռքբերումների և գիտության ոլորտում երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար.

Հրաչյա Վարդանի Շահինյան	երկրաբանական գիտությունների թեկնածու, ԵԳԻ գիտական քարտուղար, Հիդրոերկրաբանության և հիդրոերկրաքիմիայի լաբորատորիայի վարիչ
Արա Վարուժանի Ավագյան	երկրաբանական գիտությունների դոկտոր, ԵԳԻ երկրադինամիկայի և վտանգավոր երկրաբանական երևույթների լաբորատորիայի վարիչ

Լիլիթ Հրանտի Սահակյան	երկրաբանական գիտությունների թեկնածու, ԵԳԻ լիթոլոգիայի լաբորատորիայի վարիչ
Յուրի Վաչեի Սայադյան	երկրաբանական գիտությունների դոկտոր, ԵԳԻ ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայի առաջատար գիտաշխատող

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ